

Ճահուլթաբերության չափումը

Սահմանային շահուլթ

Սահմանային շահուլթը սահմանվում է որպես սահմանային եկամտի և սահմանային ծախսերի տարբերությունը՝ երբ արտադրության ծավալն աճում է մեկ միավորով: Այն կախված է տվյալ տնտեսությունում առկա կոնկրետ իրավիճակից, նրանից, թե ո՞ր ծախսերն են փոփոխվում (փոփոխական ծախսեր) և որո՞նք են մնում անփոփոխ (հաստատուն ծախսեր):

ա) ապրանքները (սերմեր, քիմիկատներ, պարարտանյութ, և այլն) և ծառայությունները սովորաբար կարող են ուղղակիորեն առանձնացվել որպես փոփոխական ծախսեր:

բ) եթե անդրադառնանք այնպիսի գործոններին, ինչպիսիք են կապիտալը՝ ընթացիկ ակտիվների ձևով, աշխատանքային ժամանակը, օգտագործված տարածքը (հողը), արտադրանքի մատակարարման իրավունքները և այլն, ապա այն, թե՛

- որքանով դրանք կարող են հատկացվել փոփոխական կամ հաստատուն ծախսերին,
 - որքանով է դրանց առաջացումը առաջ բերում ծախսեր (փոխառու գործոնների համար) կամ այլընտրանքային ծախսեր (հատկապես սեփական գործոնների համար),
- կախված է ֆերմայի իրավիճակից:

Քանի որ ողջամիտ չէ ամփոփել նշված արտադրական գործոնների օգտագործման ծախսերը, դրանք սովորաբար հաշվի չեն առնվում սահմանային շահուլթի հաշվարկներում և հաշվարկվում են առանձին:

Եթե սահմանային շահուլթի հաշվարկներն օգտագործվում են ֆերմայում պլանավորման և արդյունավետության որոշման համար, ապա այն հաշվարկները, որոնք պարունակում են օգտագործված կապիտալի և / կամ աշխատուժի հատույցի հաշվարկներ՝ համախառն սահմանային շահուլթի հիմքի վրա, ինչպես նաև ներդրված աշխատանքի և աշխատավարձի ներդրումների ծախսեր, առաջացնում են որոշակի դժվարություններ: Այդ ծախսերը պետք է վերադարձվեն և ավելացվեն համախառն սահմանային շահուլթի արժեքին, որպեսզի, օրինակ, ավելացված արժեքը ճիշտ հաշվարկվի:

Այդ պատճառով, գործնականում սահմանային շահուլթի հաշվարկի կարգը հետևյալն է՝ կապիտալի, աշխատուժի և հողի ներդրման ծախսերը սահմանային շահուլթի հաշվարկում չպետք է ներգրավվեն:

գ) հիմնական միջոցների ծախսերը (մաշվածք, կապիտալի համար ներդրված ծախսեր և այլն) համարվում են սահմանային ծախսեր միայն բացառիկ դեպքերում (ներդրումներ) և, հետևաբար, հաշվի չեն առնվում սահմանային շահուլթի հաշվարկներում:

դ) այլ հաստատուն հատուկ ծախսերը, համամասնական անուղղակի ծախսերը և ընդհանուր աշխատուժի ծախսերը սովորաբար չեն փոխվում արտադրության մասշտաբին համամասնորեն և, հետևաբար, հաշվի չեն առնվում սահմանային շահուլթի հաշվարկներում:

Սահմանային շահուլթի հաշվարկներում սահմանային արտադրանքի արժեքի կազմում եղած ոչ շուկայական արտադրանքը, ինչպիսիք են օրինակ՝ ուղղակի վճարումները, ավելացվում են համախառն արտադրանքի արժեքին:

Մեկնաբանություն

Ձև 1
10
45
46

Օրինակում բերված սահմանային շահույթի հաշվարկի նկարագրությունը հետևյալն է՝

Արտադրանքի արժեք (արտադրություն + եթե կիրառելի է՝ գուգակցված արտադրանքի արժեք և ուղղակի վճարումներ)	1,033 €/հա
— Համամասնական փոփոխական ծախսեր (ապրանքներ և ծառայություններ)	490 €/հա
= Սահմանային շահույթ (պրակտիկայում կիրառված)	543 €/հա

Սահմանային շահույթը ցույց է տալիս, թե մեկ հեկտարի հաշվով որքա՞ն գումար է առկա՝ բոլոր մնացած գործոնների ծախսերը հոգալու համար: Եթե ենթադրվում է, որ բոլոր գործոնները, որոնք դեռ հաշվի չեն առնվել, բավականաչափ հասանելի են, սահմանային շահույթը առաջին կարևոր միջոցն է այլընտրանքային ֆերմերային ձեռնարկությունների հարաբերական տնտեսական կենսունակության գնահատման համար, քանի որ որքան բարձր է ֆերմերային ձեռնարկության սահմանային շահույթի մակարդակը, այնքան ավելի բարձր է (եթե ծախսերը այլ կերպ ամրագրված են) նրա ներդրումը ֆերմայի (Չուտ) շահույթի մեջ:

Սահմանային շահույթ I, II, III

Այն իրավիճակներում, երբ կան կապիտալի (ընթացիկ ակտիվներ) փոփոխական ծախսեր՝ աշխատուժ (արտադրություն), հող և այլն, դրանք պետք է քայլ առ քայլ հաշվի առնել սահմանային շահույթի հաշվարկման մեջ: Այս ձևով հաշվարկվող ցուցանիշները սահմանային շահույթի գործնականում կիրառվող տարբերակից տարբերելու համար դրանք կոչվում են I, II, III սահմանային շահույթներ: Այս սահմանային շահույթների հաշվարկն ու մեկնաբանությունները բերված են 6_2_ գլխում: